

կելեցիին կողքին իրենց գուրգուրանքին առարկայ պէտք է դարձնեն հայ դպրոցը, մեր հայեցի ինքնութեան գիտակցական կազմաորման աչդ վառ օճախը:

Ս. Էջմիածինը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, քրիստոնէական հաստքի հայկական օճախը, քաղցրագոյն սիրով կ'ողջունէ Սիտնիի հայ դպրոցի տասնամեակը: Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած որ Իր երկնային օրհնութիւնը առատօրէն հեղու «ԱՐՇԱԿ ԵՒ ՍՈՖԻ ԳԱԼՍՏԱՆ» դպրոցին վրայ, զօրացնէ Խնամակալ Մարմինը, Տնօրէնութիւնը, Ոսուցչական կազմը եւ յատկապէս շնորհներով ծաղկեցնէ դպրոցական աշակերտները որպէսզի անոնք սնանին եւ մեծնան Ս. Մեսրոպ Մաշտոցի այգիին հոգելից ու հոգեշէն պտղաբերութեամբ: Թող տասնամեակը դառնայ մղիչ ոյժ յառաջիկայ նորանոր եւ շարանուն նուանումներու:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Գիրս օրհնութեան
ի 21 Սեպտեմբեր 1995 թ.
ի Մաշտոցիանս Արքու Էջմիածնի

